

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ**

N 151 - Ա

18 հունիսի 2018 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ  
ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 10-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետը


**որոշում եմ՝**

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում ազդարարման պատասխանատու անձ նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի օգնական Արման Հայրապետյանին:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում ազդարարման պատասխանատու Արման Հայրապետյանին՝ ղեկավարվել «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին եվ արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման եվ ձեվակերպման օրինակելի ձեվը, ինչպես նաեվ ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշման պահանջներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



 Ի. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ք. Գավառ